



ԻՆՉ Է ԱՂՄՈՒԿԸ

Աղմուկն իրենից ներկայացնում է օդի 20-20000Հց (մարդու ականջին ընկալելի տիրույթ) հաճախությամբ և շուրջ 130դբ ուժգնությամբ ոչ ներդաշնակ (չկարգավորված) ձայնային փայտանումներ: Աղմուկը միջավայրի (օդի) մասնիկների փայտանման շնորհիվ փարածվող ձայնային ալիք է, որի ճնշման հզորությունը չափվում է դեցիբելներով (դբ): Չայնի ինտենսիվությունը որոշվում է վարյերով՝ 1մ2 մակերեսի վրա (նկ.Տ4.7): Ալիքի երկարությունը կամ փայտանման հաճախությունը արտահայտվում է հերցերով (Հց): Արտադրական աղմուկը լինում է մեխանիկական, հարվածային և տերողինամիկական: Աղմուկի աղբյուրներ են ամենաարթեր շարժվող օբյեկտները, իսկ նրա ազդեցությանը մարդիկ ենթարկվում են արտադրության պայմաններում, փողոցում և կենցաղում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած վնասակարության աստիճանի աղմուկը քիմիական աղտոտումից հետո գրավում է երկրորդ տեղը: Աղմուկի մշտական ազդեցությանը ենթարկվող մարդիկ շուրջ են հոգնում, հաճախ նրանց մոտ նկատվում է շնչարգելություն, սրտի շրջակայքում ցավեր և սրտի զարկերի արագացում, արյան ճնշման անկայունություն, հոգեկան խանգարումներ, աղեստամոքսային տրակտի գործունեության փոփոխություններ և այլն: Աղմուկի ազդեցության փակ ի հայտ եկող այս նշանները դիտվում են որպես «աղմուկային հիվանդություն»:

Մարդու օրգանիզմի վրա հատկապես վնասակար ազդեցություն ունեն աղմուկի ինտոլսային և ինֆրաձայնային աղբյուրները: Մինչև 16Հց հաճախության և 75-85դբ ուժգնության տիրույթի փայտանումներն առավել դժվարացնում են աշխատանքի, հանգստի և ընդհանուր կյանքի պայմանները: Այսպես, 7Հց հաճախությամբ ինտենսիվ ինֆրաձայները, որոնք համընկնում են այսպես կոչված 'նոդեղի ալֆա-ռիթմի' հետ, կարող են առաջացնել մարդու առողջության ֆունկցիոնալ լուրջ խախտումներ: Այդպիսի աղմուկը հատուկ է արտադրությանը, տրանսպորտին, կենցաղային սարքերին (փո-

շեկույ, լվացքի մեքենա, գերցածր հաճախության երաժշտական գործիքներ): Մարդու ականջի ընկալման սահմանին մոտիկ ինֆրաձայնը (16 Հերցից փոքր) և ուլտրաձայնը (20000 Հերցից մեծ) թուլացնում են լսողական ապարատի ֆունկցիան: Նրանց ներգործության դեպքում ներքին ականջը պատասխան ռեակցիա է ցուցաբերում՝ ժամանակավորապես «խլանում է», իսկ տևական ազդեցությունից հետո վիճակը կարող է անգամ չվերականգնվել: